



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

11 June 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Ես ցանկանում եմ շնորհավորել Մոնտերեյ միջնակարգ դպրոցի շրջանավարտներին, ովքեր դպրոցն ավարտեցին այս շաբաթ: Ահա այս շաբաթվա նորությունները.

Նորություններ բյուջեի վերաբերյալ.

Օրենսդիր մարմինները դեռ բանակցում են նահանգապետի հետ [առաջարկված բյուջեի](#) վերաբերյալ: Մենք պետք է շարունակենք նամակներ ուղարկել նահանգապետին և օրենսդիր մարմիններին: Հարկադրեք նահանգապետին ընդունել օրենսդիր մարմինների ծրագիրը: **Սեղմել այստեղ օրենսդիր մարմիններին նամակ ուղարկելու համար:** Առանց նահանգապետի և օրենսդիր մարմինների աջակցության, ԲԴՄԵ-ն ստիպված կլինի ընդունել մայիս ամսվա ընթացքում վերանայած բյուջեն, որը մեզ համար կնշանակի \$13 միլիոն դոլլարի կրճատում: Բյուջեի վերաբերյալ մեր հաջորդ ժողովը կկայանա հունիսի 17-ին: Հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ սեղմելով այս հղումը.

<https://www.burbankusd.org/2020-21Budget> Բյուջեի վերաբերյալ ձեր առաջարկները կարող եք ուղարկել budget@burbankusd.org հասցեին: Դուք կարող եք դիտել կրթական գրասենյակի ժողովները [սեղմելով այստեղ](#)

- **Չորեքշաբթի, հունիսի 17-ին, երեկոյան Ժ. 7-ին – բյուջեի ուսումնասիրման ժողով**
- **Հինգշաբթի, հունիսի 18-ին, երեկոյան Ժ. 7-ին – սովորական ժողով, բյուջեի վերանայում**
- **Հինգշաբթի, հունիսի 25-ին, երեկոյան Ժ. 7-ին – կրթական գրասենյակի հատուկ ժողով – բյուջեի ընդունում**

2020-21 ուսումնական տարում դպրոցների բացումը

Դպրոցները բացելու կոմիտեն տեղադրում է իր կատարած աշխատանքները <https://www.burbankusd.org/Reopening> կայքէջում: Դուք կարող եք ուղարկել ձեր առաջարկները re-opening@burbankusd.org հասցեին: Մենք սպասում ենք Լոս Անջելեսի գավառի առողջապահական գրասենյակին հրապարակել հրահանգներ դպրոցները բացելու վերաբերյալ: Այն սկզբնական փաստաթուղթը կառաջնորդի մեր աշխատանքներին: Մենք կաշխատենք մեր գործընկերների, BTA և CSEA կազմակերպությունների հետ և հուլիսի 2-ին կփորձենք ծանոթացնել ձեզ մեր առաջարկած մոդելի հետ աշնանը դպրոցները բացելու համար: Հուսով եմք, որ այն թույլ կտա մեր ընտանիքներին ընտրել ամենալավ մոդելը՝ հիբրիդ մոդելի կամ 100% հեռակա ուսուցման միջև:

Շարունակելով աշխատել միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,

A handwritten signature in black ink, appearing to read "Matt Shi". The signature is fluid and cursive, with the first name "Matt" and the last name "Shi" clearly distinguishable.

Դոկտոր Մաթ Շիլլ
գերատեսուչ